

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ  
27.11.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 48-ը (քառասունութ):

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության /ՆԶՊ/ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ ֆիզիկական դաստիարակության և  
ՆԶՊ ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյան

2. Մանկավարժության ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյան

### 3.Ընթացիկ հարցեր:

ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական վճարում կատարող աշխատակիցների աշխատավարձը վերանայելու և սահմանված աշխատավարձը 5%-ի չափով ավելացնելու մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- 1.ԼՍԵՑԻՆ.- Ա. Խաչատրյանի զեկուցումը ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության /ՆԶՊ/ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից:/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, բարձրագույն մաթեմատիկայի և

մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ  
Ս. Սարգսյանը:

Վ. Գրիգորյանը խորհուրդ տվեց գտնել մեխանիզմ, որը կապահովի ուսանողների ֆիզիկական դաստիարակության դասերի կազմակերպման ու անցկացման արդյունավետությունը:

Ս. Սարգսյանը հետաքրքրվեց ուսանողների համեմատաբար ցածր առաջադիմության պատճառներով:

Ա. Խաչատրյանը նկատեց, որ հաշվետու ժամանակահատվածում ուսանողների ՄՈԳ-ը բավականին բարձրացել է: Այնուամենայնիվ, ուսանողների համեմատաբար ցածր առաջադիմությունը պատճառաբանեց արական սեռի ներկայացուցիչների մեծամասնությամբ, իսկ նրանց շարքերում՝ մարզիկների գերակայությամբ:

Ս. Ալեքսանյանի խոսքերով՝ ֆակուլտետի աշխատանքները բավականին ծանրաբեռնված են, քանի որ ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ամբիոնը սպասարկում է բոլոր ֆակուլտետներին: Նա արժևորեց ֆակուլտետի գործունեության համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերման՝ դեկանի կողմից բարձրացված հարցը: Ուսանողների առաջադիմության բարելավման նպատակով՝ խորհուրդ տվեց բարձրացնել նրանց պատասխանատվությունը: Արժևորելով Ա. Խաչատրյանի հետևողական գործունեությունը՝ առաջարկեց հաշվետու ժամանակահատվածում նրա կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության /ՆԶՊ/ ֆակուլտետի դեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.ԼՍԵՑԻՆ.**- Մանկավարժության ֆակուլտետի դեկանի զեկուցումը ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից:/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանը:

Ա. Ֆարմանյանի գնահատմամբ՝ մանկավարժության ֆակուլտետում ուսումնական գործընթացի ապահովման հարցում առաջնային նշանակություն ունի բարձր կարգապահությունը: Ուսումնառությանը վերաբերող բոլոր հարցերն արագ լուծվում են, և այդ հարցում դեկանի ու ամբիոնների վարիչների չափազանց հետևողական և համախմբված աշխատանքն ակնհայտ է: Ա. Ֆարմանյանը նաև արժևորեց կուրսղեկների և ավագների ինստիտուտների կառուցողական գործունեությունը: Ֆակուլտետի դրական կողմերին զուգահեռ առանձնացրեց բացասականները, որոնցից, մասնավորաբար, գիտական գործունեություն ծավալելու հանդեպ դասախոսների ցածր մոտիվացվածությունը: Այն պարզ է դարձել գիտական աշխատանքների ցուցակների վերլուծման արդյունքում: Հաշվի առնելով կատարված աշխատանքները՝ առաջարկեց հաշվետու ժամանակաշրջանում մանկավարժության ֆակուլտետի դեկանի գործունեությունը գնահատել բավարար:

Լ. Ղուկասյանը կարևորեց ֆակուլտետում աշխատանքների հստակ բաժանումը, աշխատակիցների իրազեկվածության ու համախմբվածության բարձր մակարդակը: Ֆակուլտետում առաջացած խնդիրների պատճառ համարեց գերզբաղվածությունը, որը խոչընդոտում է գիտական գործունեության ծավալմանը:

Ս. Ալեքսանյանը նկատեց, որ ֆակուլտետը բավականին մեծ է: Նա արտահայտեց մտահոգություն՝ կապված երաժշտական կրթություն

մասնագիտության առկա ուսուցման համակարգում դիմորդների բացակայության հետ: Նա ևս առաջարկեց դեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Մանկավարժության ֆակուլտետի դեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք:  
**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**3.ԼՍԵՑԻՆ.-** Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական վճարում կատարող աշխատակիցների աշխատավարձը վերանայելու և սահմանված աշխատավարձը 5%-ի չափով ավելացնելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Թույլատրել ֆինանսական բաժնի պետ Կ. Գրիգորյանին վերանայելու ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական վճարում կատարող աշխատակիցների աշխատավարձը և կատարելու սահմանված աշխատավարձի ավելացում 5%-ի չափով /հիմք՝ ֆինանսական բաժնի պետ Կ. Գրիգորյանի ս.թ. նոյեմբերի 26-ի զեկուցագիր և զեկուցագրին կից 1974թ.-ից հետո ծնված սոցիալական վճարում կատարող աշխատակիցների ցուցակ՝ սահմանված նախկին և փոփոխություն կատարելու դեպքում նոր աշխատավարձերով/:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Թ. Խաչատրյան